

Ժամանակակից քանագիտության կարևորագույն խնդիրներից է նախ՝ քանահյուսական սկզբնաղբյուրների հաշվառումն ու կանոնակարգումը, ապա հատուկ ծրագրով համակարգված նյութերի ներքին քովանդակության վերհանումը կատալոգների, ցանկերի, համահավաք ժողովածուների միջոցով:

Հայաստանի ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի քանագետները համագործակցելով լեզվագրադի Եշանավոր գիտնական, քանագետ Իսիդոր Լիկնի հետ, կիրառելով նրա ստեղծած քանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման քանակային վերլուծության համակարգը՝ ձեռնամուխ եղան նախ՝ նյութերի հաշվառում— գրանցային համակարգի, ապա կատալոգների և համահավաք ժողովածուների հրատարակման աշխատանքներին: Վերոհիշյալ ինստիտուտի քանագետների ջանքերով տպագրության է հանձնված «Հայ ժողովրդական խաղիկներ» համահավաք ժողովածուն:

Հայ քանարվեստի վերհանման խնդիրները այժմ էլ գտնվում են ստեղծագործական լուծման ճանապարհին: Այդ նույն համակարգի կիրառմամբ վերջերս ուսերեն լեզվով լույս տեսավ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սյուզան Գուլլակյանի «Հայ ժողովրդական հրաշապատում և նովելիստական հեքիաթների սյուժետային ցանկ»-ը: Հայ քանագիտությունը հարստացավ արժեքավոր և ինքնատիպ մի աշխատությունը:

Ո՛րո՞ք են ինքնատիպ այդ աշխատության հրատարակման դրդապատճառները: Հեղինակին վաղուց էր մտահոգում հայ ժողովրդական հեքիաթների համակողմանի ուսումնասիրության խնդիրը: Քաջ գիտակցելով մեան հետազոտության համար գիտական տեղեկատուների դերն ու Եշանակությունը, նա ձեռնամուխ է լինում մի քարտ և կարևոր աշխատանքի: Անհրաժեշտ է հայ քանագիտության քննազավառում եղած քաջը լրացնել. ստեղծել նախադրյալներ հայ ժողովրդական հեքիաթների ազգային կատալոգի կազմման համար, որը հնարավորություն կընձեռի գիտական հանրությանը ծանոթացնել մինչև այժմ անհայտ հայկական հեքիաթների ներքին քովանդակությանը: Նա ուսումնասիրում, ստեղծագործաբար զննում, վերլուծում է հեքիաթագիտության քննազավառում եղած անցյալի և արդի գիտական մվածումները: Արժեքավորելով Լոպատիմսկու, Գրուզինսկու, Օճուկովի, Զլեկինի, Պրոպպի, Վինգոպոդի և

այլոց կողմից կազմված ցանկերը, Գուլլակյանը, միաժամանակ, քացահայտում է վերջիններիս միակողմանիությունը, սակայն ընթացումը, որոնք խոչընդոտում են հեքիաթի ուսմակողմանի էության քացահայտմանը: Նա նախընտրում է գիտության ժամանակակից պահանջներին համապատասխան մի համակարգ, որի կիրառմամբ համակողմանիորեն կուսարանվի հեքիաթների ներքին քովանդակությունը, նրանց ազգային առանձնահատկությունները: Գուլլակյանը ստեղծագործաբար զննատելով և կիրառելով վեջը նշված նյութերի քանակային վերլուծության համակարգը, 1988 թ. հրատարակում է «Հրաշապատում հեքիաթների մոտիվային ցանկ» աշխատությունը: Եսակայն, գիտակցելով, որ այն նա լիակատար չի կարող քացահայտել հայ ժողովրդական հեքիաթների ներքին քովանդակությունը, ձեռնամուխ է լինում, նաև, սյուժետային ցանկի հրատարակման աշխատանքին: Փաստորեն, մոտիվային ցանկի կազմումը թվապես է հեքիաթային սյուժեի քացահայտման անհրաժեշտությունը:

Այս երկու աշխատանքները, պետք է ասել, հասցեսագրված են, առավելապես, հեքիաթագիտությանը զբաղվողներին և նպաստում են ոչ միայն հեքիաթի ճշգրիտ և խորը ուսումնասիրությանը, այլ հուսալի ուղեցույց են հայ քանարվեստի մի կարևոր քննազավառող միջազգային ասպարեզ դուրս բերելու գործում:

Մոտիվային ցանկը կազմելիս նեղիմակը նախապատվությունը տվել է հրաշապատում հեքիաթներին: Ընտրությունը ինքնանպաստելի կատարված է: Հեղինակի իսկ վկայությամբ, նախ՝ այն գերիշխում է ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդական հեքիաթային ռեպերտուարում, ապա հրաշապատում հեքիաթների որոշակի յուրահատկությունները՝ ինքնատիպ հորինվածքն ու աբսուրդական կառուցվածքը նպաստում են տեքստը առավել ճշգրտորեն ենթարկել վերլուծական համադրական ուսումնասիրության:

Հաշվի առնելով Ասարնե-Տոմպսոնի միջազգային կատալոգի կողմնորոշիչ դերը ազգային կատալոգների ստեղծման գործում, Գուլլակյանը իր սյուժետային ցանկը կազմել է վերջինիս կանոններին համապատասխան, ցանկի որ այն միակն է այսօր, որը չի կորցրել իր Եշանակությունը և օգնել ու օգնել է քանագետներին մի ընդհանուր լեզու գտնել տարբեր ժողովուրդների քանարվեստի ներքին քովանդակությանը հաղորդակցվելու գործում: Գուլլակյանը հետևելով նրանց ավանդույթնե-

րին, միաժամանակ իր ցանկում կատարել է որոշ լրացումներ՝ ելնելով հայկական հեքիաթների ազգային առանձնահատկությունից: Հեղինակը Աարնե-Տոմպոնի կատալոգում չգրուելով, երբեմն, համապատասխան նյութը, դիմում է էրարգարդա-Բորոտավայի թորքական և Կուրդովանիձեի վրացական հրաշապատում հեքիաթների ցանկերի օգնությամբ: Տրվում են ծանոթություններ և այլ ժողովուրդների հեքիաթներից: Այս ամենը ինքնապատակ չի կատարվում: Հեղինակը հաշվի է առել, որ նման տեղեկատու ցանկերի առկայությունը կնպաստի հայկական քանակները գիտական ամենալայն շրջաններին ճանաչելի դարձնելու, միջազգային կատալոգում իր տեղն ու դերը գտնելու գործում: Գուլլայկյանի ջանքերի շնորհիվ այսօր հայկական հեքիաթային ռեպերտուարի եթե ոչ ամբողջական՝ ապա նրա մի որոշակի մասը մտել է միջազգային շրջանառության ոլորտ, լայն հեռանկարներ բացելով վերջիններիս համեմատական-տիպաբանական ուսումնասիրության, այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային, պատմական կապերի, ազգային առանձնահատկությունների, ծագումնաբանական խնդիրների բացահայտման համար:

Հեքիաթների պլուրալիզմը կազմելու համար աղբյուրագիտական բազա են ծառայել հայ ժողովրդական հեքիաթների 10 հուտորները և նախահեղափոխական մի շարք ժողովածուներ: Ձեռքի տակ ունենալով 60 տեքստ, վերլուծական-համադրական եղանակով ճշգրտել է յուրաքանչյուր տեքստի պլու-

ժետային առանձնահատկությունները բացահայտող էական կողմերը, համարել է այն միջազգային կատալոգում գրանցված նմանատիպ պլուրալիզմի հետ և որոշել հայկականի տեղը հիշյալ կատալոգում:

Աշխատության առաջաբանում հեղինակը պարզորոշ շարադրել է պլուրալիզմի ցանկի բուն էությունը, նրա նպատակային ուղղվածության և կիրառման նշանակությունը, ցանկի կազմման սկզբունքները: Տրված է նաև ցանկից օգտվելու մեթոդական ցուցումներ:

Գուլլայկյանի այս աշխատանքը, անուշտ, կօգնի հեքիաթագետներին ծանոթանալու հայ ժողովրդական հեքիաթների ողջ ռեպերտուարին: Սակայն դա աշխատատար գործ է և մեկ մարդու հնարավորության սահմաններից վեր: Կարևորն այն է, որ նա ներկայացրել է մի աշխատանք, որը հիմք կդառնա, հետագայում, լիակատար և սպառիչ ներկայացնելու հայ ժողովրդական հեքիաթների ամբողջական քվանտիտությունը:

Ս. Գուլլայկյանի «Հայ ժողովրդական հրաշապատում և նովելիստական հեքիաթների պլուրալիզմի ցանկ» աշխատությունը արժեքավոր ներդրում է հայ մշակույթի պատմության, մասնավորապես քանագիտության քննադատում և գիտական հուսալի ուղեցույց է քանագետների, ազգագրագետների, սոցիոլոգների, լեզվաբանների և մշակույթի այլ քննադատների մասնագետների հետազոտական աշխատանքներին աշակից լինելու տեսակետից:

Ս. Ն. ՎԱՐԳԱՆԾԱՆ

Ս. Չ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ժամանակակից խորհրդանայ պոեմը (1960—1980-ական թվականներ), Եր. համալս. հրատարակչություն, 1990, 175 էջ

С. З. ГРИГОРЯН. Современная армянская советская поэма. Изд. Ереванского университета, 1990, 175 с.

Ժամանակակից խորհրդանայ պոեզիան մշտապես զբաղեցրել և շարունակում է զբաղեցնել տեսական-քննադատական միտքը: Այդ ուշադրությունից, քննականբար, անմասն չի մնացել նաև արդի խորհրդանայ պոեմը, որի դրսևորումները քննելու ու գնահատվել են պոեզիայի ընդհանուր հարցերի ու պրոբլեմների հանգույցում: Սակայն, իրավամբ, նկատելիորեն քիչ են ծանրային տեսանկյունից կատարված ուսումնասիրությունները, մի իրողություն, որն արդեն իսկ հիմնավորում է Սեյրան Գրիգորյանի մեծագրության հրատապությունը և կարևորությունը:

Նախքան քուն նյութին անցնելը, հեղինակն անդրադառնում է հետպատերազմյան մեկուկես տասնամյակի (1948—1959) քանաստեղծական դրսևորումներին, հասկանալի պատճառներով ծանրանալով պոեմի կեցության վրա: Համոզիչ փաստարկներով նա ցույց է տալիս այդ կեցության ճգնաժամային բնույթը՝

մի դեպքում նշելով անկոնֆլիկտայնության «տեսության» թանձր անդրադարձումները, մեկ այլ դեպքում՝ գեղարվեստական մակարդակի բացակայությունը: Եվ այնուամենայնիվ, որոշ իմաստով չափազանցված է թվում այն տեսակետը, ըստ որի «50-ական թթ. երկրորդ կեսին սովետահայ պոեմի ճգնաժամը ոչ միայն չհաղթահարվեց, այլև ավելի խորացավ» (էջ 11): Մանավանդ որ նույն ժամանակաշրջանի պոեմներում, թեև եզակի, բայց ուշագրավ նմուշներ գտնվում են (օրինակ՝ Պ. Սևակի «Ուշացած իմ սեր» ստեղծագործությունը):

Ելնելով խորհրդանայ գրականության պատմության ընդունված պարբերացումից և արդի փուլի սկիզբը համարելով 1957 թվականը՝ հեղինակն այնուհանդերձ գտնում է, որ խորհրդանայ պոեմը սկիզբ է առնում 1959—1960 թթ.՝ Պ. Սևակի «Սնունդի զանգակատում» և Վ. Դավթյանի «Թողարկեցին» ստեղծա-